EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 51386/14

Տիգրան ԱՌԱՔԵԼՅԱՆԸ եւ այլք ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), 2020 թվականի հուլիսի 7-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek]՝ *Նախագահ,*

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]՝ *դատավորներ,*

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

հաշվի առնելով 2014 թվականի հուլիսի 8-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

հաշվի առնելով գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ որոշումը.

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատուների ցանկը ներկայացված է հավելվածում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

Դիմումատուները Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ներկայացրել են բողոք նրանց նկատմամբ հարուցված քրեական վարույթի արդարացիության վերաբերյալ:

2020 թվականի մարտի 26-ին եւ ապրիլի 24-ին Դատարանն ստացել է կողմերի կողմից ստորագրված՝ գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ հայտարարություններ, որոնց համաձայն՝ դիմումատուները համաձայնել են հրաժարվել սույն գանգատի համար հիմք հանդիսացած փաստերի առնչությամբ ընդդեմ Հայաստանի հետագա պահանջներից՝ պայմանով, որ Կառավարությունը պարտավորություն կստանձնի նրանց միասին վճարելու 12 000 եվրո՝ ցանկացած նյութական եւ ոչ նյութական վնասի, ինչպես նաեւ ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ, որը կփոխարկվի Հայաստանի արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, եւ ենթակա է վճարման Դատարանի կողմից կայացված որոշման մասին ծանուցվելու օրվանից երեք ամսվա ընթացքում: Այս գումարը նշված եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում Կառավարությունը պարտավորվում է այդ ժամկետը լրանալու օրվանից մինչեւ վճարման օրը վճարել այդ գումարի նկատմամբ հաշվարկված պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ: Վճարումը համարվում է գործի վերջնական լուծում:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դատարանը հաշվի է առնում կողմերի միջեւ գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունը: Այն բավարար է համարում, որ գործի կարգավորման հիմքում ընկած է Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով սահմանված՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, եւ չի տեսնում որեւէ պատճառ գանգատի հետագա քննությունն արդարացնելու համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է գործը հանել քննվող գործերի ցուցակից:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Որոշում է գանգատը հանել քննվող գործերի իր ցուցակից՝ Կոնվենցիայի 39-րդ հոդվածին համապատասխան:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2020 թվականի սեպտեմբերի 3-ին:

Ռենատա Դեգեներ	Քրշիշթոֆ Վոյտիչեկ
Քարտուղարի տեղակալ	Նախագահ

Հավելված

Թիվ	Դիմումատուի անունը	Ծննդյան ամսաթիվը	Քաղաքացի ությունը	Բնակության վայրը
1	Տիգրան ԱՌԱՔԵԼՅԱՆ	1981 թվականի դեկտեմբերի 3	ՀՀ	Երեւան, Հայաստան
2	Սարգիս ԳԵՎՈՐԳՅԱՆ	1992 թվականի ապրիլի 5	ՀՀ	Երեւան, Հայաստան
3	Արտակ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	1981 թվականի ապրիլի 22	ՀՀ	Երեւան, Հայաստան
4	Դավիթ ԿԻՐԱՄԻՋՅԱՆ	1991 թվականի հունիսի 12	ՀՀ	Վիլորբան, Ֆրանսիա